ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՏԻԿԻՆ ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆԻՆ

Եզրակացություն

Առողջապահության ոլորտում լիցենզավորման հանձնաժողովի նիստի

ք.Երևան 19.11.2024

2024 թվականի նոյեմբերի 19-ին ժամը 14:^{00}-ին Առողջապահության նախարարի 2018 թվականի հունիսի 26-ի թիվ No 1593 – Ա հրամանով ստեղծված լիցենզավորման հանձնաժողովը հետևյալ կազմով.

Լ. Նանուշյան - Առողջապահության նախարարի առաջին տեղակալ (նախագահ)

Ա. Ավոյան – Առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի տեղակալ (նախագահի տեղակալ)

Վ. Ալեքսանյան - Առողջապահության նախարարության լիցենզավորման գործակալության պետ (քարտուղար)

Ք. Ղոնյան - Առողջապահության նախարարության բժշկական օգնության քաղաքականության վարչության պետ

Մ. Հարությունյան – Առողջապահության նախարարության դեղորայքային քաղաքականության և բժշկական տեխնոլոգիաների վարչության պետ

Վ. Զոփունյան - «Իրավունքների զարգացման կենտրոն» ՀԿ-ի նախագահ

Քննարկվեց Առողջապահության նախարարության կողմից «ԳՐԻՆ ՎՈՐԼԴ ԷՔՍՊՐԵՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը 2022 թվականի մայիսի 24-ին տրված արտադրական կանեփի արտադրության թիվ Կ-ԿԱ-000008 (հասցե՝ Մարզ Արմավիր, համայնք Տարոնիկ հողամաս) և 2022 թվականի մայիսի 24-ին տրված արտադրական կանեփի ներմուծման և արտահանման թիվ Կ-ՆՄԱ-000008 (հասցե՝ Մարզ Արմավիր, համայնք Տարոնիկ հողամաս) լիցենզիաների

գործողության դադարեցնելու հարցը, որի վերաբերյալ հանձնաժողովը քննարկումների և փակ գաղտնի քվեարկության արդյունքում տվել է հետևյալ եզրակացությունը.

«ԳՐԻՆ ՎՈՐԼԴ ԷՔՍՊՐԵՍ» ՍՊԸ

Եզրակացություն՝ դադարեցնել «ԳՐԻՆ ՎՈՐԼԴ ԷՔՍՊՐԵՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Առողջապահության նախարարության կողմից 2022 թվականի մայիսի 24-ին տրված արտադրական կանեփի արտադրության թիվ Կ-ԿԱ-000008 (հասցե՝ Մարզ Արմավիր, համայնք Տարոնիկ հողամաս) լիցենզիայի գործողությունը:

Հիմք՝ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը, «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի 45.6-րդ հոդվածի 15-րդ և 16-րդ մասերը, ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 15-ի N 1170-Ն որոշման N 1 հավելվածի 30-րդ կետը և ՀՀ ԱՆ լիցենզավորման գործակալության կարծիքը:

«ԳՐԻՆ ՎՈՐԼԴ ԷՔՍՊՐԵՍ» ՍՊԸ

Եզրակացություն՝ դադարեցնել «ԳՐԻՆ ՎՈՐԼԴ ԷՔՍՊՐԵՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Առողջապահության նախարարության կողմից 2022 թվականի մայիսի 24-ին տրված արտադրական կանեփի ներմուծման և արտահանման թիվ Կ-ՆՄԱ-000008 (հասցե՝ Մարզ Արմավիր, համայնք Տարոնիկ հողամաս) լիցենզիայի գործողությունը:

Հիմք՝ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը, «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի 45.6-րդ հոդվածի 15-րդ և 16-րդ մասերը, ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 15-ի N 1170-Ն որոշման N 1 հավելվածի 30-րդ կետը և ՀՀ ԱՆ լիցենզավորման գործակալության կարծիքը:

Հանձնաժողովի նախագահ՝ Լ. Նանուշյան

Նախագահի տեղակալ

Անդամներ

Հրապարակման օրը՝ 21 հունվարի 2026 թվական: